ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Անուշ Մարգարյան
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս

Հոդվածը նվիրված է «մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացություններին: Դրանում թվարկված են դրանք սահմանող միջազգային փաստաթղթերն ու պաշտպանող մարմինները:

Հիմնաբառեր. մարդու իրավունքներ, մարդու իրավունքներ և ազատություններ, կոնվենցիա, քաղաքական, խոշտանգումներ:

Մարդու իրավունքները և օրինական շահերը ցանկացած երկրի, հասարակության, ինչպես նաև հանուր մարդկության գոյատևման կարևորագույն տարերրն են:

Յուրաքանչյուր մարդ իր ողջ գիտակցական կյանքում ձգտում է ազատության, ինչն իրականացնելիս մշտապես բախվում է տարբեր արգելքների և խոչընդոտների, ուստի առաջ է գալիս դրանց դեմ պայքարելու և դրանք հաղթահարելու անհրաժեշտություն1: Ելնելով դրանից՝ մարդկությունն ակնկալում է, որ պետությունը կստեղծի այնպիսի նպաստավոր պայմաններ, երաշխիքներ, որոնք կապահովեն իրենց իրավունքներն ու ազատությունները:

«Մարդու իրավունքներ» արտահայտությունը հանրահայտ է: Այսօր դժվար է գտնել մեկին, ով չի լսել մարդու իրավունքների մասին: Մինչդեռ ինչպես ցանկացած երևույթի, այնպես էլ մարդու իրավունքների վերաբերյալ կան ամենատարբեր, երբեմն իրարամերժ ընկալումներ և բա-

1 Տես Վ.Պողոսյան, «Մարդու իրավունքներ. հասկացություններ, սկզբունքներ, մոտեցումներ»: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002թ., Նախաբան:

ցատրություններ2:

Մարդու իրավունքը սոսկ իրավական հասկացություն չէ, այն նախ և առաջ փիլիսոփայական կատեգորիա է, որը փորձում է բացահայտել մարդու տեղը, դերն ու նշանակությունը հասարակության մեջ: Պատահական չէ, որ փիլիսոփայական ամենատարբեր ուսմունքների միջոցով միշտ էլ փորձ է արվել պարզել հասարակության բնականոն զարգացման համար չափազանց կարևոր այդ հասկացության բնույթը (Համուրաբի, Արիստոտել, Մ. Գոշ, Մաքիավելի, Հ. Գրոցիոս, Սպինոզա, Ժ.Ժ.Ռուսո, Սմբատ Սպարապետ և այլն):

Մարդու իրավունքները միաժամանակ ունեն նաև քաղաքագիտական նշանակություն, որով այն անմիջականորեն առնչվում են քաղաքական կարևորագույն հարցադրումներին՝ պետության և քաղաքացու հարաբերություններին: Հենց սրանով էլ մարդու իրավունքները ստանում են իրավական նշանակություն (կարիք է առաջանում սահմանել իրավունքների պաշտպանության հիմնահարցերը, դրանց երաշխիքների հստակ կառուցակարգերը):

Մարդու իրավունքներն ունեն նաև հոգեբանական, բարոյագիտական, սոցիոլոգիական և այլ նշանակություններ: Հետևաբար, այս ամենով հանդերձ, մարդու իրավունքների բացահայտումը ամբողջության մեջ ենթադրում է համալիր վերլուծություն:

Մարդու իրավունքներն ունեն գերակայություն մարդկային համակեցության բոլոր կանոնների նկատմամբ: Հետևաբար յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության մեջ պետության գործունեության հիմնական ուղղություններից մեկը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է:

«Մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացությունն ի հայտ է եկել դեռևս հնագույն դարաշրջաններում: Եթե ազատության վերաբերյալ առաջին հիշատակումը հանդիպում է մ.թ.ա. 14-րդ դարում3, ապա մարդու իրավունքները գոյություն ունեին դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում, դրանք ամրագրում էին օրենքի ու օրինականության արժեքն ու կարևորությունը:

Մարդկության ամբողջ պատմությունն իրենից ներկայացնում է մարդու պայքար պետության հետ՝ առավել շատ իրավունքներ ու ազատություններ ձեռք բերելու համար: Այդ պայքարը ներառում էր նաև արդեն իսկ նվաճած իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար առավել գործուն մեխանիզմներ ձեռք բերելու միտում: Մարդկության զարգացման յուրաքանչյուր փուլին զուգահեռ ավելի շատ սոցիալական շերտեր են սկսում ձեռք բերել իրավունքներ ու ազատություններ: Ժամանակակից հասարակությունում արդեն յուրաքանչյուր մարդ անկախ իր դիրքից ունի որոշակի անօտարելի իրավունքներ ու ազատություններ:

2 Տես «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ», ԵԱՀԿ, Երևան, 2013թ., էջ 9:

3 Տես International Human Rights Protection; Accessed February 21 2010; Available at: http://www.cdphrc.uottawa.ca/eng/doc/inter-web/sitesint_e.php.

Իրավունքների ու ազատությունների վրա հասարակությունն ու մարդկությունը սևեռվել է հատկապես XX դարի երկրորդ կեսին, երբ միջազգային հանրությունը, դասեր քաղելով դարի երկու աշխարհամարտերից և տարածաշրջանային մեծաթիվ բախումների դառը փորձից, որոնց ժամանակ զանգվածային մասշտաբներով անտեսվում և ոտնահարվում էին մարդու իրավունքները, նպատակադրվեց միջազգային իրավունքի նորմերի միջոցով պաշտպանել այդ իրավունքներն ու ազատությունները՝ դրանք դիտելով որպես «ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմք», ինչպես նշված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում[4]:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար, իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ և խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով»: Հռչակագիրը շեշտում է մարդկային արժանապատվության անգնահատելի արժեքը, որը պետք է ճանաչվի բոլոր մարդկանց համար, առանց որևէ խտրականության: Այդուհանդերձ, Հռչակագիրը որոշակի սահմանափակումներ է նախատեսում մարդու իրավունքների իրականացման հարցում՝ դրանք պայմանավորելով հասարակական կարգի պահպանության անհրաժեշտությամբ, որն էլ իր հերթին, անհրաժեշտ է մարդու իրավունքների իրականացման պայմաններ ստեղծելու համար:

Մարդու հիմնական իրավունքները լայնորեն ընդունված և ճանաչված են ամբողջ աշխարհում: Դրանք ներկայացված են սահմանադրություններում, ՄԱԿ-ի կանոնադրությունում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և միջազգային մի շարք կոնվենցիաներում:

Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության հիմնական միջոցը դարձավ ՄԱԿ-ի Կանոնադրությունը (1946թ.): Այն հիմք դրեց հասարակության բոլոր անդամների արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչման ազատությանը, արդարությանը, ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանն ու խթանմանը:

ՄԱԿ-ի Կանոնադրությունից հետո մարդու իրավունքների վերաբերյալ առաջին համընդգրկուն փաստաթուղթը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է, որում թվարկվում են մարդու քաղաքացիական (անձնական), քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքները:

Մարդու իրավունքները սահմանող փաստաղթերը կյանքի կոչելու, դրանց կենսագործումը վերահսկելու և մարդու իրավունքների խախտումները քննության առնելու համար գոյություն ունեն նաև միջազգային մարմիններ.

- ✓ HRC – Մարդու իրավունքների կոմիտեն վերահսկում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային

4 Տես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանը:

դաշնագրի և դրան կից 2 կամընտիր արձանագրությունների (1966թ. և 1989թ.) կենսագործումը,

- ✓ CESCR – Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեն վերահսկում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966թ.) և դրան կից կամընտիր արձանագրության (2008թ.) կենսագործումը,
- ✓ CERD – Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն վերահսկում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (1965թ.) կենսագործումը,
- ✓ CEDAW – Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն վերահսկում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (1979թ.) և դրան կից կամընտիր արձանագրության (1999թ.) կենսագործումը ,
- ✓ CAT – Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտեն վերահսկում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (1984թ.) կենսագործումը,
- ✓ CRC – Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն վերահսկում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (1989թ.) և դրան կից 2 կամընտիր արձանագրությունների (2000թթ.) կենսագործումը,
- ✓ CMW – Միգրանտ աշխատողների հարցերով կոմիտեն վերահսկում է Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի (1990թ.) կենսագործումը,
- ✓ CRPD – Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն վերահսկում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին միջազգային կոնվենցիայի (2006թ.) և դրան կից կամընտիր արձանագրության (2006թ.) կենսագործումը,
- ✓ CED – Հարկադրական անհետացումից պաշտպանության հարցերով կոմիտեն վերահսկում է Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիայի կենսագործումը (2006թ.),
- ✓ SPT – Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ենթակոմիտեն վերահսկում է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության կենսագործումը: Այն նոր տիպի մարմին է ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում, որն ունի միայն կանխարգելող լիազորություն[5]:

Խոսելով մարդու իրավունքներն ու ազատություններն ամրագրող և գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերի մասին՝ նախ նշենք, որ

5 Տես ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների մանդատը», Երևան, 2008թ., էջ 13:

մարդու հիմնական իրավունքները ներկայացված են ազգային սահմանադրություններում, ՄԱԿ-ի կանոնադրությունում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և միջազգային մի շարք կոնվենցիաներում:

Մարդու իրավունքների բնագավառում գոյություն ունեն մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնց նպատակն է ճանաչել և պաշտպանել մարդու իրավունքները:

Դրանցից են՝

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (Հռոմ՝ 1950թ.),
2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.),
3. Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիան (1984թ.):

Վերոնշյալներից բացի, գոյություն ունեն նաև մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք ածանցյալ ձևով առնչվում են մարդու կարգավիճակին և իրավունքներին: Յուրաքանչյուր ոլորտ կարգավորող իրավական ակտ ուղղակի թե անուղղակի ձևով շոշափում է մարդու իրավունքները, քանի որ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող յուրաքանչյուր երևույթ անմիջականորեն վերաբերում է մարդուն, նրա իրավունքներին, ազատություններին, օրինական շահերին և դրանց պահպանմանը: Դրանց ոչ սպառիչ թվարկումը հետևյալն է՝

1. Ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիա,
2. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության հետ կապված գործողությունների համակարգման մասին պայմանագիր,
3. Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին կոնվենցիա,
4. Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա,
5. Ահաբեկչության արգելման մասին կոնվենցիա,
6. Ահաբեկչության ռմբահարումներն արգելելու մասին կոնվենցիա,
7. Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին կոնվենցիա,
8. Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիա,
9. Եվրոպական սոցիալական խարտիա,
10. Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին կոնվենցիա,
11. Մասնագիտական հիվանդությունների դեպքում աշխատողներին փոխհատուցման մասին կոնվենցիա,
12. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն,

13. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրություն,
14. Աշխատավարձի պաշտպանության մասին կոնվենցիա,
15. Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա,
16. Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա,
17. Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիա,
18. Ամենշաբաթյա հանգստի մասին կոնվենցիա,
19. Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին կոնվենցիա,
20. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա,
21. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա,
22. Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիա,
23. Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիա:

Այս ակտերը ոչ միայն անդամ պետությունների համար սահմանում են մարդու իրավունքների ոլորտին վերաբերող իրավական պարտականություններ, այլև նախատեսում են պետությունների կողմից ստանձնած պարտականությունների կատարումը վերահսկող միջազգային իրավական կառուցակարգեր:

Շնորհիվ վերոնշյալ փաստաթղթերի՝ մարդու իրավունքներն աստիճանաբար ձեռք են բերել միջազգային նշանակություն: Մարդը դարձել է միջազգային իրավունքի սուբյեկտ և միջազգային իրավունքի բնագավառում ձևավորվել է մարդու իրավունքների միջազգային իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանության հիշատակված փաստաթղթերին մասնակցող պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքին հետևելու համար գործում են հատուկ մարմիններ: Անդամ պետությունը պարտավոր է իր ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ պարբերական զեկույցներ ներկայացնել ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին: Այս մարմինները պարբերական այցելություններ են կատարում անդամ պետություններ և զեկույցներ կազմում մոնիտորինգի արդյունքների մասին[6]:

Հայաստանի Հանրապետությունն այս տարիներին միացել է բազմաթիվ միջազգային պայմանագրերի՝ ստանձնելով կարևորագույն պարտականություններ:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է՝

- ✓ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը և նրան կից կամընտիր արձանագրությունը,

6 Տես «Զինված ուժերում մարդու իրավունքների ..., էջ 19:

- ✓ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը,
- ✓ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան,
- ✓ «Ապարտեիդի հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» ժնևի կոնվենցիան,
- ✓ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ժնևի կոնվենցիան,
- ✓ Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին կոնվենցիան,
- ✓ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան,
- ✓ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան,
- ✓ Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան,
- ✓ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան,
- ✓ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան,
- ✓ Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին կոնվենցիան և բազմաթիվ այլ միջազգային պայմանագրեր[7]:

2001 թվականին դառնալով Եվրախորհրդի անդամ, Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է «Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների մասին» կոնվենցիային, որին համապատասխան գործում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հետևաբար, միանալով այդ կոնվենցիային, ՀՀ քաղաքացիներն իրենց խախտված իրավունքների վերականգնման նպատակով կարող են դիմել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որի որոշումները վերջնական են և ենթակա պարտադիր կատարման:

Մարդու իրավունքների առանձին տեսակների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունն ունի նաև առանձին օրենքներ, որոնք առավել մանրամասն կարգավորում են իրավունքների իրականացման և պաշտպանության ընթացակարգերը:

7 Տես http://www.un.am/hy/p/iii-un-treaties-and-armenia.

ДОКУМЕНТЫ УСТАНАВЛИВАЮЩИЕ ПРАВА И СВОБОДЫ ЧЕЛОВЕКА И ОБЕСТЕЧИВАЮШИЕ ИХ ОРГАНЫ

Ануш Маркарян
Преподаватель юридической кафедры Международного университета Евразия

Статья посвящена концепции «прав и свободы» человека. В статье перечислены международные документы и органы защиты.

Ключевые слова: права и свобода человека, конвенция, политический, пытки.

HUMAN RIGHTS AND FREEDOMS DOCUMENTS AND THEIR RESPECTIVE BODIES

Anush Margaryan
Lecturer of the Law Department at Eurasia International University

The article is devoted to the concept of “human rights and freedoms”. It brings to light the international documents defining these concepts and the enforcement agencies.

The article lists international documents and their protection bodies.

Key words: human rights and freedoms, convention, political, torture.